USDA-ի Խտրականության բացառման հայտարարություն

Համաձայն Քաղաքացիական իրավունքների մասին Դաշնային օրենքի և ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարության (US Department of Agriculture, USDA) քաղաքացիական իրավունքների կանոնակարգերի և քաղաքականությունների՝ USDA-ին, իր Գործակալություններին, գրասենյակներին և աշխատակիցներին, ինչպես նաև հաստատություններին, որոնք մասնակցում կամ ղեկավարում են USDA-ի ծրագրերը, արգելվում է խտրականությունը՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, սեռի, հաշմանդամության, տարիքի հիման վրա, ինչպես նաև USDA-ի կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող ցանկացած ծրագիր կամ գործունեության մեջ հետապնդումը կամ հաշվեհարդարը քաղաքացիական իրավունքների բնագավառում նախկինում կատարած գործողությունների համար:

Հաշմանդամություն ունեցող անձիք, ում հարկավոր են հաղորդակցման այլընտրանքային միջոցներ ծրագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար (օրինակ՝ Բրայլյալ տառեր, մեծ տառաչափ, աուդիո սկավառակ, ամերիկյան ժեստերի լեզու և այլն), պետք է կապվեն այն Գործակալության հետ (Նահանգային կամ տեղական), որտեղ դիմել են նպաստների համար: Խուլ, լսողության կամ խոսելախանգարման խնդիրներ ունեցող անձիք կարող են դիմել USDA-ին՝ Դաշնային հաղորդագրությունների ծառայության միջոցով՝ (800) 877-8339 հեռախոսահամարով: Բացի այդ, ծրագրի վերաբերյալ տեղեկությունները կարող են հասանելի լինել այլ լեզուներով:

Ծրագրի խտրականության մեղադրանքով գանգատ ներկայացնելու համար, լրացրեք USDA-ի Ծրագրային խտրականության գանգատի ձևաթուղթը (USDA Program Discrimination Complaint Form), (AD-3027), որը կարելի է գտնել առցանց՝ How to File a Complaint հասցեով կամ USDA-ի ցանկացած գրասենյակում, ինչպես նաև նամակ ուղղել USDA-ին և նամակում ներկայացնել ձևաթղթում պահանջվող բոլոր տեղեկությունները: Բողոքի ձևաթղթի օրինակը խնդրելու համար զանգահարեք (866) 632-9992 հեռախոսահամարով: USDA-ին ներկայացրեք ձեր լրացված ձևաթուղթը կամ նամակը հետևյալ հասցեով՝

(1) փոստով՝ U.S. Department of Agriculture
Office of the Assistant Secretary for Civil Rights
1400 Independence Avenue, SW
Washington, D.C. 20250-9410

(2) ֆաքսով՝ (202) 690-7442, կամ

(3) էլ.նամակով՝ program.intake@usda.gov

Այս հաստատությունը տրամադրում է հավասար հնարավորություններ: